Արձանագրություն N 4

ՀՀ ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-2023/1 ծածկագրով գնումների էլեկտրոնային համակարգի (ARMEPS) էլեկտրոնային աճուրդով ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար մաքսային մարմնի հանրային ծառայողների համազգեստի ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

22 փետրվարի 2023թ.
ժամը 10:00

Մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Արտակ Մանգասարյանը, անդամներ՝ Անի Ղարիբջանյանը, Ջուլիետա Բաբայանը և քարտուղար՝ Սպարտակ Հարությունյանը:

Օրակարգ
Հայտերի գնահատման և ամփոփման մասին

ՀՀ ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-2023/1 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նախագահ Արտակ Մանգասարյանը նիստը հայտարարեց բացված:

Ուսումնասիրությամբ պարզվեց, ՄՍ ԵՎ ԸՆԿԵՐՆԵՐ ՍՊԸ-ն սահմանված կարգով և ժամկետում շտկել արձանագրված անհամապատասխանությունները՝ բացի 45-րդ չափաբաժնի, որում առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը ընդհանրապես չի համապատասխանում հրավերով սահմանված նկարագրին:

Հանձնաժողովի անդամների կողմից իրականացվեց հայտերի գնահատում, որի արդյունքում ՌԻՄՆԱ և ՄՍ ԵՎ ԸՆԿԵՐՆԵՐ ՍՊԸ-ներիի հայտերը գնահատվեցին բավարար՝ բացի ՄՍ ԵՎ ԸՆԿԵՐՆԵՐ ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի 45-րդ չափաբաժնից, որը գնահատվեց անբավարար:

Հաշվի առնելով վերոգրյալը և ամփոփելով գնահատման արդյունքները

հանձնաժողովը որոշեց

- ՌԻՄՆԱ ՍՊԸ-ին ճանաչել ընտրված մասնակից 41, 43, 44, 46 և 47-րդ չափաբաժինների մասով:
- ՄՍ ԵՎ ԸՆԿԵՐՆԵՐ ՍՊԸ-ին ճանաչել ընտրված մասնակից 1-ից 40-րդ, և 42-րդ չափաբաժինների մասով:
- ՄՍ ԵՎ ԸՆԿԵՐՆԵՐ ՍՊԸ-ի հայտը 45-րդ չափաբաժնի մասով մերժել:
- ընթացակարգը 45-րդ չափաբաժնի մասով հայտարարել չկայացած:
- ՄՍ ԵՎ ԸՆԿԵՐՆԵՐ ՍՊԸ-ի վերաբերյալ տեղեկատվությունը համապատասխան նյութերով ուղարկել ֆինանսների նախարարություն՝ վերջինիս գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ նախաձեռնելու համար:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի

նախագահ _____ Արտակ Մանգասարյան

անդամներ _____ Անի Ղարիբջանյան

_____ Ջուլիետա Բաբայան

քարտուղար _____ Սպարտակ Հարությունյան